«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2015 թվականի

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները»** հարցը (զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանի պահանջներին համապատասխան: 2014-2015 ուսումնական տարում համալսարանն ունեցել է առկա ուսուցման բակալավրիատի 297 (նախորդ տարվա 1148-ի փոխարեն), հեռակա ուսուցման բակալավրիատի 424 (նախորդ տարվա 425-ի փոխարեն) և առկա ուսուցման մագիստրատուրայի 482 (նախորդ տարվա 666-ի փոխարեն) շրջանավարտներ, որոնց համար կազմակերպվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ: Նախորդ տարիների չավարտած ուսանողների համար կազմակերպվել են նաև ամփոփիչ ատեստավորման քննություններ: Ռեկտորատը, ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության ու ուսումնակազմակերպական բաժինները, դեկանատները և ամբիոնները բավական աշխատանք են կատարել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների կազմակերպումը պատշաճ մակարդակով իրականացնելու և նախորդ տարիներին նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Առկա ուսուցման բակալավրիատում դրական գնահատականով պաշտպանվել է 277 (93.3%) ավարտական աշխատանք, որից 57-ը (20.5%) արժանացել են «գերազանց», 70-ը (25.3%)՝ «լավ» գնահատականների. ընդհանուր առաջադիմությունը կազմել է (93.3%): Նախորդ տարիների շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել է 89 ուսանող, որից 75-ը (84.3%) գրանցել են դրական արդյունք (նախորդ տարվա 83/74-ի (89.1%) դիմաց): 10 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (նախորդ տարվա 145-ի դիմաց):

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը գերազանցապես կազմակերպվել է ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունից 100% արդյունք արձանագրվել է 7 մասնագիտություններում՝ «Բանկային գործ», «Ապահովագրական գործ», «Հողագույքային հարաբերություններ», «Շուկայաբանություն (մարքեթինգ)», «Վիճակագրություն», «Կառավարման տեղեկատվական համակարգեր» և «Հակաճգնաժամային կառավարում», իսկ ամենացածր առաջադիմությունը (85.4%) ցուցաբերել են «Ֆինանսներ» մասնագիտության շրջանավարտները:

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝+37410 521720
Ֆաքս՝+37410 528864, Էլ-փոստ՝info@asue.am, www.asue.am

Հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանքների պաշտպանությանը թույլատրված 424 ուսանողից 381-ը (89.9%) ստացել են դրական, 36-ը՝ «անբավարար» գնահատականներ, իսկ 7-ը չեն ներկայացել: Պաշտպանության արդյունքում 31 ուսանող ստացել են «գերազանց», 95-ը՝ «լավ» գնահատականներ:

Առկա ուսուցման մագիստրատուրայում պաշտպանության է ներկայացվել 481 թեզ (առաջադիմությունը կազմել է 98.5%), որից 292-ը (60.6%) արժանացել են «գերազանց», 94-ը (19.5%)՝ «լավ», 88-ը (18.2%)՝ «բավարար» գնահատականների: Նախորդ տարիների շրջանավարտներից մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել է 13 ուսանող, որից 11-ը ստացել են դրական գնահատականներ: 166 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ (34.4%)՝ նախորդ տարվա 155-ի (23.3%) փոխարեն:

Խորհուրդը միաժամանակ նշում է, որ ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպման աշխատանքներում դեռևս կան շտկման ենթակա թերություններ և լուծում պահանջող խնդիրներ:

Առանձնացնենք ավարտական աշխատանքներում ու մագիստրոսական թեզերում տեղ գտած ուշադրության արժանի թերությունները և բացթողումները.

1) Աշխատանքների մի մասում օգտագործված գրականության ցանկերը շատ աղքատիկ են, նշված են միայն մի քանի աղբյուր: Որոշ աշխատանքներում հանդիպում են համացանցից կամ պետական մարմինների պաշտոնական կայքում տեղակայված փաստաթղթերից նույն ոճով արտատպված նյութեր՝ առանց հղումների: Թույլ են ներկայացվում թեմաների արդիականության հիմնավորումները: Շատ դեպքերում բացակայում են թեմայի շարադրանքի տրամաբանական հաջորդականությունը:
2) Ինչպես ավարտական աշխատանքների, այնպես էլ մագիստրոսական թեզերի թեմաներում դեռևս նկատվում են նախորդ տարիների թեմաների կրկնություններ. որոշ դեպքերում փորձառության վայրերը չեն համապատասխանում թեմաներին: Թեմաների տարբերությունը ապահովվելու համար նմանատիպ աշխատանքներին տրվել են տարբեր վերնագրեր: Որոշ աշխատանքներում թեմայի վերնագիրը և շարադրանքը չեն համապատասխանում միմյանց:
3) Աշխատանքների մի մասում և հատկապես ավարտական աշխատանքներում բացակայում են քանակական և որակական վերլուծությունները: Սակավ են այն աշխատանքները, որտեղ վերլուծություններն իրականացվել են մաթեմատիկական ու վիճակագրական մեթոդների օգնությամբ: Գրեթե չեն օգտագործվում համակարգչային փաթեթներ: Ավարտական աշխատանքներում բավարար չեն տնտեսական, իրավիճակային վերլուծությունները:
4) Կան դեպքեր, երբ մագիստրոսական թեզերն իրենց գիտական խորությամբ և ծավալով չեն տարբերվում ավարտական աշխատանքներից:
5) Կան բազմաթիվ կարծիքներ և գրախոսություններ, որոնք չունեն համապատասխան ձև, բովանդակություն, չեն պարունակում հիմնավորված եզրահանգումներ: Որոշ կարծիքներ և գրախոսություններ չեն գերազանցում մեկ էջը:

6) Առկա են ավարտական աշխատանքներ ու մագիստրոսական թեզեր, որոնք ներկայացված են բազմաթիվ լեզվաոճական և տեխնիկական սխալներով և առանց խմբագրման:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին և դեկաններին.**

1) ավարտական աշխատանքների համար մինչև 2015 թվականի նոյեմբերը, իսկ մագիստրոսական թեզերի համար մինչև 2016 թվականի մարտը ամբիոններում քննարկել, ֆակուլտետների խորհուրդների նիստերում հաստատել և ուսումնամեթոդական բաժին ներկայացնել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի արդիականացված թեմաների, կատարող ուսանողների և ղեկավարների ցանկը.
2) բացառել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ու շարադրանքների կրկնությունները.
3) ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում հաստատվելուց հետո բացառել ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի թեմաների փոփոխությունը.
4) խիստ կարևորել փորձառության վայրի համապատասխանությունը ավարտական աշխատանքի թեմային, հնարավորինս ապահովել փորձառության արդյունքների արտացոլումը ավարտական աշխատանքներում, իսկ ղեկավարներ նշանակելիս՝ նրա մասնագիտացման ոլորտը.
5) առանձնակի ուշադրություն դարձնել աշխատանքների արդիականությանը և եզրակացությունների շարադրանքին, ինչպես նաև նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությանը.
6) խիստ կարևորել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և անդամների ընտրության գործընթացը.
7) ներկայացվող պահանջներին չհամապատասխանող կարծիքներ և գրախոսություններ ներկայացողների հանդեպ կիրառել պատժամիջոցներ:

2. **Սույն որոշումը քննարկել բոլոր թողարկող ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում:**

3. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին և Մ.Ն.Հարությունյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

30.09.2015 թ.